

**ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՔԻՄԻԱ**

**Հարությունյան Լ. Ռ., Լաչինյան Մ. Լ., Վարդանյան Ռ. Լ., Հարությունյան Ռ. Ս.**  
**Մակերևութային ակտիվ նյութերի ազդեցությունն ասկորբինաթթվի և նիկոտինաթթվի մթնոլորտային օքսիդացման կինետիկայի վրա** էջ. 3–9

Ուսումնասիրվել է ասկորբինաթթվի և նիկոտինաթթվի մթնոլորտային օքսիդացման կինետիկան մակերևութային ակտիվ նյութերի ջրային լուծույթներում: Յույց է տրված, որ վիտամինների օքսիդացման երևույթների կինետիկան նկարագրվում է առաջին կարգի ռեակցիայի հավասարմամբ: Կարևոր են պայմանները, որում ընթանում է օքսիդացումը. մինչ միցելային տիրույթում վիտամինների օքսիդացման արագությունը մեծանում է, մինչդեռ միցելային տիրույթում՝ փոքրանում է:

**Ամիրբեկյան Կ. Յու. Hoechst 33258-ի և ԴՆԹ-ի փոխազդեցության ուսումնասիրությունն առանց ԴՄՍՕ-ի և նրա առկայությամբ** էջ. 10–13

Աշխատանքում ուսումնասիրվել է հայտնի ԴՆԹ-ֆլուորեսցենտային նշանակիր Hoechst 33258-ի (H33258) և հորթի թիմուսի ԴՆԹ-ի փոխազդեցությունը կլանման էլեկտրոնային լուսաչափության միջոցով, առանց ԴՄՍՕ-ի և նրա առկայությամբ: Բացահայտվել է, որ ԴՄՍՕ-ն դրսևորում է արտահայտված դեմատուրացիան հատկություն: Ստացված ջերմային դեմատուրացիայի արդյունքները ցույց են տալիս, որ H33258-ԴՆԹ կոմպլեքսի հալման ջերմաստիճանը նվազում է լուծույթում ԴՄՍՕ-ի քանակի ավելացման հետ: Այսինքն՝ ԴՄՍՕ-ն նշանակալի ազդեցություն ունի կոմպլեքսի ջերմային կայունության վրա: Յույց է տրված նաև, որ ԴՄՍՕ-ի ցածր կոնցենտրացիաների դեպքում կոմպլեքսն ավելի կայուն է, քան ԴՄՍՕ-ի մեծ կոնցենտրացիաների դեպքում:

**Գրիգորյան Չ. Լ. Դիմեթիլսուլֆօբսիդ-ացետոնիտրիլ համակարգում հեղուկ-գոլորշի ֆազային հավասարակշռությունը 293.15–323.15 Կ ջերմաստիճանային տիրույթում** էջ. 14–18

Ստատիկ եղանակով հետազոտվել է դիմեթիլսուլֆօբսիդ-ացետոնիտրիլի բինար համակարգի հեղուկ-գոլորշի ֆազային հավասարակշռությունը:

293.15–323.15 Կ ջերմաստիճանային տիրույթում չափվել է հազեցած գոլոր-  
շինների ընդհանուր ճնշումը: Դիմեթիլսուլֆօքսիդի և ացետոնիտրիլի պարզիալ  
ճնշումները հաշվարկվել են Գիբս–Դյուհեմի հավասարման ինտեգրման  
եղանակով: Հավելյալ մոլային Գիբսի էներգիաները համապատասխանեցվել  
են Ռեդլիխ–Կիստերի հավասարմամբ, հաշվարկվել են կորելյացիայի պարա-  
մետրերը: Հաստատվել է, որ հավելյալ մոլային Գիբսի էներգիաները բացա-  
սական են, և ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց մեծանում է նաև  
իդեալական վարքագծից շեղումը:

**Պետրոսյան Վ. Ա. Կապարի միգրացիան և բաշխումը Հրազդան գետի ջուր-  
հատակային նստվածք համակարգում** էջ. 19–24

Հետազոտվել է Հրազդան գետի ջուր–հատակային նստվածք համա-  
կարգում կապարի միգրացիան և բաշխումը: Մետաղների միգրացիայի և  
բաշխման, նաև տարբեր ցուցանիշների ազդեցության գնահատման համար  
ուսումնասիրվել է կապարի բաշխման գործակցի և տարբեր ցուցանիշների  
միջև գծային կախվածությունը 2012–2013թթ. ժամանակահատվածում:

#### ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Առաքելյան Ա. Ն., Աղաբաբյան Հ. Ռ. Սրտի ռիթմի փոփոխությունների կախվածու-  
թյունն էքստրավերսիայի աստիճանից** էջ. 25–29

Հետազոտման առարկա է հանդիսանում սրտի ռիթմի ցուցանիշների  
փոփոխությունների ուսումնասիրությունը ստեղծագործական առաջադրանք  
կատարելու ընթացքում էքստրավերսիայի աստիճանով տարբերվող փորձարկ-  
վողների մոտ: Բացահայտվել է լարվածության ցուցիչի նվազում ինտրա-  
վերտների մոտ, ինչը վկայում է վեգետատիվ նյարդային համակարգի պարա-  
սիմպաթիկ բաժնի ազդեցության ուժեղացման մասին: Ի տարբերություն  
նրանց, էքստրավերտների մոտ պարասիմպաթիկ էֆեկտ չի դիտվում:

**Ստեփանյան Լ. Գ., Համբարյան Լ. Ռ. Ֆիտոպլանկտոնային համակեցության  
զարգացման դինամիկան Ախպարա ջրամբարում** էջ. 30–33

2015 թ. իրականացվել է Ախպարա ջրամբարի ֆիտոպլանկտոնային  
համակեցության որակական և քանակական ցուցանիշների սեզոնային հե-  
տազոտություններ: Բացահայտվել է, որ գրանցված ջրիմուռների ավելի քան  
45%-ը հանդիսանում են օրգանական աղտոտվածության ինդիկատորներ: Ըստ  
մակերևութային ջրերի տրոֆոսապրոբայնական դասակարգման՝ Ախպարա  
ջրամբարի ջրերի որակը տատանվել է  $\beta$ -օլիգոսապրոբ (գարուն) մակարդա-  
կից մինչև  $\beta$ -մեզոսապրոբ (ամառ, աշուն), ինչը վկայում է, որ ամառ և աշուն

սեզոններին ավելացել է օրգանական աղտոտվածության մակարդակը: Նախկին տարիների համեմատ 2015 թվականին բացահայտվել է, որ ֆիտոպլանկտոնի կազմում մեծ թիվ են կազմում խոշոր միաբջջիչ և գաղութային տեսակները:

**Ղազարյան Կ. Ա., Մովսեսյան Հ. Ս., Ղազարյան Ն. Փ., Շալունց Ը. Վ. ՀՀ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շրջակա տարածքի հողերի ծանր մետաղներով աղտոտվածության գնահատումը** էջ. 34–42

Հետազոտության նպատակն է հանդիսացել ՀՀ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շրջակա տարածքի հողերի ծանր մետաղներով աղտոտվածության և դրանով պայմանավորված էկոլոգիական ռիսկերի գնահատումը: Հետազոտություններն անց են կացվել 2013թ.: Ծանր մետաղներով հողերի աղտոտվածության մակարդակը որոշվել է աղտոտման գործակիցների ( $C_f$ ), աղտոտման աստիճանի ( $DC$ ), աղտոտման թույլատրելի բեռնվածության ցուցանիշի ( $PLI$ ) և գեոակուումոլյացիոն ցուցանիշի ( $I$ -geo) միջոցով: Բացահայտվել է, որ գրեթե բոլոր հետազոտվող տարածքներում հիմնական աղտոտող ծանր մետաղներ են հանդիսացել Cu, Mo, Pb և Cd, ինչը պայմանավորված է Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությամբ:

**Առաքելյան Ա. Ա. Գեների ֆունկցիոնալ հավաքածուները հետտրավմատիկ սթրեսային խանգարման ժամանակ** էջ. 43–48

Աշխատանքում կատարվել է հետտրավմատիկ սթրեսով տառապող անձանց արյան միակորիզ բջիջներում և այս հիվանդության կենդանական մոդելներում գեների լայնածավալ էքսպրեսիայի գնահատում գլխավոր կոմպոնենտների և գեների ֆունկցիոնալ հավաքածուների հարստացման վերլուծության կիրառմամբ: Ստացված արդյունքները վկայում են, այս հիվանդության պաթոգենեզում գենետիկական կոմպոնենտի կարևոր դերի, ինչպես նաև բրոնխի բորբոքային ռեակցիաների, ցիտոկինների, նեյրոնալ և աճի գործոնների ազդանշանային ուղիների ակտիվացման հիվանդության առաջացման և զարգացման գործընթացներում ներգրավման մասին: Բացի այդ, գլխավոր կոմպոնենտների և գեների ֆունկցիոնալ հավաքածուների հարստացման վերլուծության համակցումը հանդիսանում է ֆենոտիպ կախյալ գեների էքսպրեսիայի կապի գնահատման արդյունավետ մոտեցում:

**Քոչարյան Գ. Հ., Մինասյան Ս. Հ., Թավադյան Լ. Ա. ԴՆԹ-ի հետ մորին, քվերցետին և ռուտին ֆլավոնոիդների փոխազդեցությունը** էջ. 49–54

Քառակուսային-ալիքային վոլտամպերաչափական (ՔԱՎ) եղանակով հետազոտվել են ԴՆԹ-ի հետ ֆլավոնոիդների՝ մորինի, քվերցետինի և ռուտինի փոխազդեցությունը լուծույթի 0.002 M իոնական ուժի պայմաններում: Ստացվել են նշված ֆլավոնոիդների և ԴՆԹ-ի հետ դրանց կոմպլեքսների ՔԱՎ կորերը: Տիրապիայի կորերի հիման վրա ստացվել են  $r$  և  $C_f$  կոորդինատները (Սկետչարդի կոորդինատները) և կառուցվել են  $r$ -ից  $r/C_f$ -ի

կախվածության կորերը: Ստացվել են կապման ոչ գծային կորերը, որոնք մեկնաբանվել են ԴՆԹ-ի հետ հետազոտվող ֆլավոնոիդների կապման առնվազն երկու եղանակների գոյության տեսանկյունից: Փոխազդեցության երկու եղանակների համար կորերից որոշվել են կապման հաստատունի ( $K$ ) և ֆլավոնոիդի մեկ կապված մոլեկուլին ընկնող ԴՆԹ-ի զույգ հիմքերի թիվը ( $n$ ):

**Մկրտչյան Մ. Մ., Չախարյան Մ. Կ., Առաքելովա Կ. Ա., Մեղրակյան Ա. Մ.,  
Գևորգյան Չ. Հ., Կծոյան Ժ. Ա. Հայաստանում գերակշռող *Salmonella Enteritidis* շտամերի վիրուլենտության գեների մոլեկուլային որոշիչները** էջ. 55–60

Ուսումնասիրության հիմնական նպատակն է հաստատել վիրուլենտության գեների հետերոգենությունը *Salmonella enterica serovar* կլինիկական իզոլյատների մոտ, որոնք առաջացնում են տարբեր կլինիկական պատկերով սալմոնելոզներ: PCR սկրինինգի կիրառմամբ, բացահայտվել են պաթոգենության կոդիներում լոկալիզացված վիրուլենտության գեների և պլազմիդ կոդավորված վիրուլենտության գործոնների տարածվածությունը: Ստացված արդյունքները վկայում են *S. Enteritidis* կլինիկական իզոլյատների *spv* օպերոնի գեների գենետիկական հետերոգենության մասին: